# Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան

## ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #02



Հունվար 2021

Երևան, Հայաստան

*Enterprise Europe Network Armenia,*
**Address: 5a M. Mkrtchyan St., Yerevan 0010, Armenia**
**Tel.: (+374 12) 54 16 48, 56 37 14 info@eenarmenia.am; http://eenarmenia.am/**

## Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ ....... 3

Սննդի վերամշակում ....... 3

Տեքստիլ արտադրություն ....... 6

Շինարարություն ....... 9

R&D ....... 12

Տեղեկատվական տեխնոլոգիաներ ....... 12

Կոսմետիկա ....... 14

Առողջապահություն ....... 16

Այլ ոլորտներ ....... 18

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ ....... 21

Նորություններ և միջոցառումներ ....... 25

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

*Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.*

## Սննդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

| | |
|---|---|
| **Բնական մրգահյութերի լեհական արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ**<br>Բնական մաքուր հյութեր արտադրող լեհական ՓՄՁ-ն փնտրում է միջազգային գործընկերներ: Ընկերությունը մշակել է խնձորի այգիներ մշակելու երկար ավանդույթ, որը թույլ է տալիս արտադրել 100% բնական մաքուր խնձորի հյութ: Ընկերությունը շահագրգռված է իր արտադրանքի համար տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրի միջոցով գտնել գործընկերներ ամբողջ աշխարհում:<br>https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/157d88a1-9ca6-4d13-8ac6-e80dee366853<br>Ծածկագիր․ BOPL20210113002 |  |
| **Միջերկրածովյան թարմ մրգեր և բանջարեղեն, ինչպես նաև օրգանական և ոչ խտանյութից հյութեր արտադրող իսպանական ընկերությունը փնտրում է առևտրային և արտադրական համագործակցություն**<br><br>2014 թ.-ին հիմնադրված իսպանական ընկերությունը, որը խտանյութից և առանց խտանյութի (NFC) հյութեր է արտադրում մեծ քանակությամբ կամ փաթեթավորված, ինչպես նաև խյուսեր, եթերայուղեր, պալպ և միջերկրածովյան թարմ ցիտրուսներ, մրգեր և սառեցված բանջարեղեն |  |

(օրգանական կամ ոչ) փնտրում է առևտրային գործընկերներ մուտք գործելու համար նոր շուկաներ․ համագործակցությունը կարող է լինել տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո: Ընկերությունն առաջարկում է նաև թարմ/սառեցված մրգեր և բանջարեղեն սուպերմարկետների խոշոր ցանցերին և գյուղմթերք արտադրող ընկերություններին՝ արտադրական համաձայնագրերի ներքո:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/30772c12-0e69-4dbd-9374-d5f5dc343e92

Ծածկագիր․ BOES20201127002

**Ձեռագործ հոլանդական պանրի արտադրությամբ զբաղվող գյուղատնտեսական կոոպերատիվն առաջարկում է տարածման և առևտրային գործակալության համաձայնագիր**




Նիդերլանդներից հայտնի ֆերմերային կոոպերատիվը հիմնականում զբաղվում է կովի կաթից ձեռագործ պանրի մշակման և արտադրության ոլորտում: Կոոպերատիվը փնտրում է դիստրիբյուտորներ և (կամ) գործակալներ Եվրոպայում և դրանից դուրս: Սեփական լաբորատորիայի միջոցով ընկերությունը կարող է նաև արտադրել հատուկ պանիր հաճախորդների պահանջով և կարող է այն առաջարկել բացառիկ խմբաքանակներով: Համագործակցությունը կլինի տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրերի շրջանակում:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d738f339-6976-46e1-aa9d-238bc186558e

Ծածկագիր․BONL20201210001

**Բնական օրգանական թեյերի արտադրողը Կոսովոյից, փնտրում է տարածման ծառայությունների և առևտրային գործակալության համաձայնագիր**

Ընկերությունը Կոսովոյից մասնագիտացված է բնական, օրգանական թեյերի արտադրության մեջ: Ընկերության արտադրանքն արդեն ներկայացված է և լավ հայտնի է տեղական շուկայում: Ընկերությունը նախատեսում է առաջիկայում ընդլայնել իր արտադրությունն ու ցանկանում է դուրս գալ միջազգային նոր շուկաներ: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագիր:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7f9af998-683b-437a-a77f-e8c693b64f05

Ծածկագիր․ BOXK20210118001

**Արգենտինացի արտահանողը Եվրոպայում փնտրում է դիստրիբյուտորներ սոյայի, դեղին եգիպտացորենի, ցորենի հացահատիկի, կերակրման գարու, համեմի սերմերի, թռչնի կանարյան սերմերի, դեղին / կանաչ ոլոռի հատիկների համար:**

Արգենտինական ընկերությունն արտադրում է և վաճառում գյուղատնտեսական արտադրանք, ինչպես

նաև ընկերությունը գնում և վաճառում է հացահատիկ: Ընկերությունը նաև զբաղվում է անասնապահական բիզնեսով․ այն առաջարկում է գյուղատնտեսական բիզնեսի արտադրական և կառավարման ծառայություններ: Ընկերությունը Եվրոպայում գործընկերներ է փնտրում տարածման համաձայնագրով իր արտադրանքի (սոյա, դեղին եգիպտացորեն, ցորենի հատիկ, կերակրման գարի, համեմի սերմեր, կանարյան թռչնի սերմեր, դեղին / կանաչ ոլոռ) համար:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/9492a4cf-cfb1-4d93-a80a-1ec22439e96d

Ծածկագիր. BOAR20210115001

**Մեղր արտադրող լեհական ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր**

Լեհական ընկերությունը մասնագիտացված է բարձրորակ մեղրի արտադրության մեջ, որը միշտ պարունակում է միայն բնական բաղադրիչներ՝ առանց կոնսերվանտների: Դանդաղ և բնական արտադրության ցիկլը հավերժացնում է մեղրի սննդային արժեքը և առողջական որակները: Ընկերությունը ցանկանում է արտահանել իր արտադրանքն արտաքին շուկաներ և փնտրում է դիստրիբյուտորներ ամբողջ աշխարհում:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4ba69a04-e5ac-401d-87fb-58a2c419e648

Ծածկագիր. BOPL20210113004

## Գործարար համագործակցության հարցումներ

**Պարենային ապրանքների ներմուծող ու դիստրիբյուտր ընկերությունը Կոսովոյից փնտրում է սննդամթերք արտադրողներ**

Ընկերությունը Կոսովոյից, որը մասնագիտացված է սննդամթերքի զանգվածային վաճառքի և տարածման մեջ, ինչպես օրինակ՝ մսամթերք, կաթնամթերք և այլն, Կոսովոյի շուկայում ցանկանում է ուսումնասիրել որակյալ արտադրողներից ներմուծման նոր հնարավորություններ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո՝ ընդլայնելու համար իր պորտֆելը:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/8318d670-b477-41dc-b687-f8871e05cd4e

Ծածկագիր․ BRXK20210122001

**Սառեցված մթերք և մսամթերք ներմուծող մակեդոնական ընկերությունը առևտրային և տարածման համաձայնագրերի շրջանակներում փնտրում է սննդամթերք արտադրողներ**

Մակեդոնական ընկերությունը տարբեր տեսակի սննդամթերքների, ինչպիսիք են սառեցված միսը և մսամթերքը (հավ, հնդկահավ, տավարի և հորթի միս, խոզի միս և ծովային ձուկ), ներմուծող և դիստրիբյուտոր է:Ընկերությունը առևտրային գործակալության և տարածման համաձայնագրերի շրջանակներում փնտրում է եվրոպական նոր գործընկերներ (սննդի արդյունաբերության ոլորտի արտադրողներ և մեծածախ վաճառողներ):

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/52fff3d7-45a1-45f6-91bf-84adc8f4489a

Ծածկագիր․ BRMK20201216001

# Տեքստիլ արտադրություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Նորաձևության և տեքստիլի ոլորտի իսպանական ընկերությունը, որը ձևում և արտադրում է ամեն տեսակի հագուստ, փնտրում է գործընկեր Եվրոպայում արտադրական համաձայնագրի, ենթապայմանագրի կամ համատեղ ձեռնարկության համար:**

Իսպանական նորաձևության ոլորտի ընկերությունը նախագծում և արտադրում է նորաձև գործվածքներ: Ընկերությունն առաջարկում է դիզայնի ծառայություններ և արտադրություն ձեռքի պայուսակների, աքսեսուարների, հարմարավետ կոշիկների, տրիկոտաժի և սպորտային հագուստի ոլորտում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են իրենց արտադրանքի էկո-էքսկլյուզիվությամբ և ցանկանում են մշակել արտադրանքը զրոյից մինչև վերջնական նախատիպը (համատեղ ձեռնարկություն, ենթապայմանագրային համաձայնագրեր և/կամ արտադրական համաձայնագիր): Ընկերությունը գործընկերներ է փնտրում ամբողջ Եվրոպայում: https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c1c1de85-0d7d-47da-8501-087c4f6a7d6e



| Ծածկագիր․ BOES20201111002 | |
|---|---|

**Գոզնոցների լեհական արտադրողն ու դիզայները գործընկերներ է փնտրում տարածման ծառայությունների և առևտրային գործակալության համաձայնագրերի շրջանակներում**

Բացառիկ գոգնոցների լեհական ապրանքանիշը, որը բնութագրվում է նյութերի մանրուքների և որակի նկատմամբ առավելագույն ուշադրությամբ, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ: Ընկերությունն առաջարկում է բարձրորակ և հարմարավետ ապրանքներ, ինչպես նաև եզակի, բայց և էլեգանտ ձևեր: Հիմնական արտադրանքը լավ հարմարեցված գոգնոցներն են․ ընկերությունը շեշտը դնում է պրոֆեսիոնալության վրա:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/78bebde0-5bd4-41ef-9010-065f6c005612

Ծածկագիր․ BOPL20210119001

**Կենսաբանական աղտոտումից պաշտպանող նորարարական տեքստիլ արտադրող գերմանական ընկերությունը փնտրում է առևտրային, տարածման և համատեղ ձեռնարկության համաձայնագրեր:**

Գերմանական ՓՄՁ-ն հայտնագործել է արծաթով ծածկված տեքստիլ, որն ունի հակաբակտերիալ կարողություններ: Դա «Գերմանիայում արտադրված» արտոնագրային համակարգ է, որը կարող է օգտագործվել խմելու ջրի ամբարներում/բաքերում, ջրի տեխնիկական շղթաներում և հեղուկներ պահող կամ տեղափոխող այլ համակարգերում: Հետևաբար, այս ապրանքը հատկապես հետաքրքիր է այն ընկերությունների համար, ովքեր ցանկանում են պաշտպանել իրենց խմելու, արդյունաբերական ջրի արտադրությունը կամ զով ջուրը կենսաբանական աղտոտումից: Ընկերությունն առաջարկում է գործակալության, տարածման և համատեղ ձեռնարկության համաձայնագրեր:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6b2da389-5ede-4cdf-b4d0-8c776ffb4f4d

Ծածկագիր․ BODE20190523001

**Նորաձևության ոլորտի չեխ արտադրողը փնտրում է դիստրիբյուտոր իր արտադրանքի համար և առաջարկում է արտադրության անվճար կարողություն**

Չեխական ընկերությունը փնտրում է իրենց ապրանքների համար տարածման ծառայություններ, ինչպիսիք են ներքնազգեստը, լողազգեստը, գիշերազգեստը և այլն (հագուստ կար, հագուստի մասեր): Համագործակցության տարբերակ կլինի արտադրական համաձայնագիրը՝ չեխական ընկերության անվճար արտադրական կարողության շնորհիվ:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c8029d99-0699-4175-b721-8f3b6c1e08ce

Ծածկագիր․ BOCZ20200122001



**Գերմանական ընկերությունը փնտրում է էկոլոգիապես մաքուր տեքստիլի և հիվանդանոցների, խնամքի տների համար նախատեսված աշխատանքային հագուստի դիստրիբյուտորներ**

Գերմանական ընկերությունն առաջարկում է բժշկական աշխատանքային հագուստ (սկրաբ, լաբորատոր վերնազգեստ, տաբատ, պոլո վերնաշապիկ), որոնք պատրաստված են էկոլոգիապես մաքուր

մանրաթելերից և գործվածքներից: Թափանցիկ արժեքային շղթան երաշխավորում է կայունությունն ու անվտանգությունը: Ընկերությունը փնտրում է  տարածման գործընկերներ կամ առևտրային գործակալներ:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/00cefccc-3066-4b22-9db9-125026eea2b7

Ծածկագիր․ BODE20200204001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Բելգիական նորաստեղծ ընկերությունը փնտրում է էքսկլուզիվ և ամուր ապարանջաններ արտադրող**

Իր սեփական ամուր ապարանջանները նախագծող բելգիական ընկերությունն արտադրական համաձայնագրերի ներքո փնտրում է գործընկեր ապարանջաններ արտադրելու համար:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f8aa90b2-4ec0-477f-92d7-36ffa907f59a

Ծածկագիր. BRBE20200327001



**Էլեկտրոնային առևտրի ոլորտում գործող հոլանդական ընկերությունը համագործակցության նպատակով փնտրում է  ապրանքանիշեր, որոնք առևտրային գործակալության համաձայնագրի շրջանակներում կարող են ցածր և միջին հատվածի համար կաշվից /արհեստական կաշվից պայուսակներ և ճամպրուկներ մատակարարել:**

Էլեկտրոնային առևտրի ոլորտում գործող հոլանդական ընկերությունը մասնագիտացված է կաշվե իրերի՝ պայուսակների և կոշիկների վաճառքում: Ընկերությունն իրենց վեբ-խանութի համար փնտրում է կաշվից/արհեստական կաշվից պայուսակների և ճամպրուկների նոր և նորաձև ապրանքանիշեր նախատեսված ցածր և միջին հատվածի համար: Ընկերությունը փնտրում է  ապրանքանիշեր, որոնք հիմնված են Եվրոպայում: Համագործակցությունը կարող է լինել  առևտրային գործակալության համաձայնագրի ներքո:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e1821e8a-e69a-4ef7-a347-74903d5e00f7

Ծածկագիր. BRNL20200229001

# Շինարարություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Սլովակյան ընկերությունը, որը մասնագիտացված է նորարարական բետոնե շինանյութի արտադրության մեջ, արտոնագրային համաձայնագրերի ներքո փնտրում է գործընկերներ Եվրոպայում և դրանից դուրս**

Նորարարական շինարարական բլոկներ արտադրող սլովակյան ընկերությունը, որը նվիրված է մասսաների ներկայիս շինարարության և կենսամակարդակի բարելավմանը, լիցենզային համաձայնագրերի ներքո փնտրում է  շինարարության ոլորտի լիցենզիա:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6729af44-c69f-413a-a4c4-93b7901f2ba4

Ծածկագիր. BOSK20201119001

**Լեհական ընկերության կողմից աութսորսինգի համաձայնագրով առաջարկվում է կամուրջների մոնիտորինգի և տեխնիկական սպասարկման վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ**

Շինարարության ոլորտի լեհական ընկերությունը տեխնիկական խորհրդատվություն է առաջարկում կամուրջների պահպանման և մոնիտորինգի լավագույն ռազմավարությունների և լուծումների, սպասարկման կազմակերպությունների որակի և կամուրջների մոնիտորինգի նոր մեթոդների արդյունավետության վերաբերյալ: Ընկերությունն առաջարկում է աութսորսինգի համաձայնագրի շրջանակներում համագործակցություն կամուրջների սեփականատերերին/օպերատորներին և կամուրջների դիտարկման և պահպանման ծառայություններ մատուցող  ընկերություններին:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7a08980a-583c-4107-b700-779fdaef5e9a

Ծածկագիր. BOPL20210108001

**Մետաղներ մշակող պորտուգալական ընկերությունը գործընկերներ է փնտրում՝  ենթապայմանագրային համաձայնագիր կնքելու համար**

Մետաղամշակման ոլորտի պորտուգալական ընկերությունը վաճառում է մետաղամշակման

ծառայություններ և աշխատում է շատ տարբեր ոլորտներում, ինչպիսիք են նավատորմը, նավթը և գազը, շինարարությունը, լեռնահանքային արդյունաբերությունը, ձուլարանները, սնունդը, էներգիան, ջրի մաքրումը, օդի մաքրումը և այլն: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են իրենց նախագծերի մատակարարներ ունենալով՝ ենթապայմանագրային համաձայնագրի ներքո:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/3a24e893-003c-4060-83a1-7822797fbe5e

Ծածկագիր. BOPT20210120003

**Թեթև պողպատե կոնստրուկցիաներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է ենթապայմանագրային համաձայնագրեր**

Ընկերությունը հյուսիսարևելյան Լեհաստանից, որը մասնագիտացված է պահեստների և տրանսպորտի համար նախատեսված շեղբերի արտադրության մեջ, փնտրում է լաստակներ, պատուհաններ և ապակի արտադրող ընկերություններ, ինչպես նաև տրանսպորտային և շինարարական ընկերություններ: Ընկերությունն առաջարկում է իր արտադրական ծառայությունները ենթակապայմանագրի ներքո:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/3e6a78fa-d4e3-4d2c-8ef6-ab3cde798855

Ծածկագիր. BOPL20201019001

**Բոսնիական ընկերությունն առաջարկում է ջերմամեկուսիչ ապակի, ՊՎՔ և ալյումինե պատուհաններ և դռներ՝ տարածման կամ արտադրական համաձայնագրերի ներքո**

Բոսնիա և Հերցեգովինայի Սրպսկայի շրջանի ընկերությունը փնտրում է նոր գործընկերներ, ովքեր իրենց ապրանքները կգնեն տարածման կամ արտադրական համաձայնագրերի շրջանակներում: Ընկերությունն առաջարկում է ջերմամեկուսիչ ապակի, ՊՎՔ և ալյումինե պատուհաններ և դռներ:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f2b95aa3-e388-4a10-880a-de9e662ff5ab

Ծածկագիր. BOBA20201014001

**Մալթական ընկերությունը ենթաապայմանագրային համաձայնագրի ներքո արդյունաբերական ոլորտին առաջարկում է ավտոմատացման և ռոբոտների վրա հիմնված համակարգերի հետ կապված անհատական նախագծման և մշակման ծառայություններ**



Մալթական ընկերությունը մշակում է անհատականացված լուծումներ արդյունաբերական տարբեր ճյուղերի համար, որոնք պահանջում են ավտոմատացում, ռոբոտացված համակարգեր և ավտոմատացված կառավարվող տրանսպորտային միջոցներ: Ընկերությունը փնտրում է միջազգային հաճախորդներ

| | |
|---|---|
| դեղագործական, ավտոմոբիլային, ավիացիոն, նյութատեխնիկական և արտադրական ոլորտներից, որոնք ենթապայմանագրի ներքո ցանկանում են իրենց հարմարեցված ծառայությունները: https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/21629190-e2e9-43c5-b3cc-cf3d41d65f48 <br><br> Ծածկագիր. BOMT20210114001 | |

## Գործարար համագործակցության հարցումներ

| | |
|---|---|
| **Չժանգոտվող պողպատից, պղնձից և արույրից պատրաստված կենցաղային և խոհանոցային պարագաներ վաճառող ռումինական ընկերությունը ԵՄ-ում և դրանից դուրս փնտրում է մատակարարներ՝ հիմնվելով առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրերի վրա** <br><br> Տարածման ծառայությունների գործունեության մեջ փորձ ունեցող ռումինական ընկերությունը ցանկանում է մեծացնել իր արտադրանքի պորտֆելը՝ ներմուծելով ապրանքների նոր մոդելներ, հիմնականում՝ չժանգոտվող պողպատից, պղնձից և արույրից պատրաստված կենցաղային և խոհանոցային պարագաներ՝ համագործակցելով առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրերի վրա: Նաև մեծ հետաքրքրություն են առաջացնում գինու պատրաստման և պահպանման, բնական ալկոհոլային խմիչքների և եթերային ծաղիկների յուղերի թորման և պահեստավորման համար օգտագործվող պարագաներն ու սարքերը: <br><br> https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e62d32e2-c449-4d09-bd73-0e2385a8cd25 <br><br> Ծածկագիր. BRRO20200219001 |  |
| **Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացված է տաղավարների համակարգի և ինտերիերի ու էքստերիերի համար նախատեսված պարագաների ապրանքների ոլորտում, փնտրում է արտադրական կամ տարածման համաձայնագրեր** | |

Ռումինական ընկերությունը Տրանսիլվանիայից, որը ներմուծում է, նախագծում և տեղադրում է տարբեր տիպի հավաքովի տաղավարներ, ապակյա կորպուսներով, ջերմակայուն կամ WPC փայտե տախտակներով, տեռասաների կահույք, Zip էկրանով ստվերային համակարգեր և այլն՝ նախատեսված բնակելի և ոչ բնակելի շինությունների համար, ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը և փնտրում է նոր միջազգային արտադրողներ և մատակարարներ՝ վերը նշված ապրանքների համար։

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f191cc38-18c7-48fe-8de3-d8e598500f09

## R&D




**COVID-19. Իսպանական բիոտեխնոլոգիական ընկերությունը գործընկերներ է փնտրում՝ մշակելու նոր իմունոթերապիա COVID19-ի դեմ՝ հիմնվելով Քիմերական վիրուսի մասնիկների վրա, որոնք առկա էին Eureka-ի, H2020-ի և այլ ծրագրերում:**

Իսպանական ՓՄՁ-ն գործընկերներ է փնտրում, որոնք կարող են աջակցել COVID19 անտիգենների զննումն ու ընտրությունը՝COVID19-ի դեմ նախատիպեր մշակելու համար: Ընկերությունն ունի քիմերական վիրուսի նման մասնիկների պլատֆորմային տեխնոլոգիա, որոնք ցույց են տալիս ընտրված անտիգեններ՝մարդկանց մեջ ուժեղ իմունային պատասխաններ ստանալու համար: Ծրագիրն ունի 3 հիմնական փուլ. նախատիպերի ձևավորում, զննում և արտադրություն, նաև վարակամերժություն առաջացնող: Ընկերությունը որոնում է ընկերություններ, հետազոտական հաստատություններ կամ համալսարաններ, որոնք փորձառու են հետազոտական առողջության ոլորտում (Eureka):

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0027165b-4ac6-4deb-a392-2948decf9ceb

Ծածկագիր. RDES20200605001

# Տեղեկատվական տեխնոլոգիաներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Ծրագրակազմի վերավաճառողներն ու ավելացված արժեք ստեղծող դիստրիբյուտորներ են որոնվում ակտիվների կառավարման ֆինանսական ծրագրակազմի համար՝ առևտրային գործակալության համաձայնագրերով**

Ֆրանսիական ընկերությունը ֆինանսական հաստատությունների համար մշակել է ակտիվների կառավարման առաջատար ծրագրակազմ, որը գրեթե ամբողջությամբ ծածկում է ակտիվների կառավարման բիզնեսում նրանց կարիքները: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք կզբաղվեն իր ծրագրակազմը բանկերին, ակտիվների կառավարման ընկերություններին և միջազգային ֆոնդերին տարածելու գործունեությամբ: Համագործակցությունը կլինի առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c90a04e7-f23d-49c9-bc14-c6bde116dc7a

Ծածկագիր. BOFR20210114001

**Ընկերությունը Կոսովոյից, որը մշակում է պատվերով տարբեր ծրագրային լուծումներ բիզնես գործընթացների համար, փնտրում է գործընկերներ՝ համագործակցելու համար աութսորսինգային կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:**

Ծրագրային ապահովման մշակման ոլորտի ընկերությունը, որը հիմնադրվել է 2009 թ.-ին Կոսովոյի Պրիշտինա քաղաքում, առաջարկում է տարբեր հարթակներում անհատական ծրագրերի մշակման ոլորտում մասնագիտացված ծառայություններ, մատուցում է բացառիկ որակի աշխատանք տարբեր արդյունաբերությունների համար, որոնք փնտրում են ծրագրային լուծումներ:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/badb28e9-52e5-4360-aff2-1fa0c2a19e69

Ծածկագիր. BOXK20201222001

**Ավստիական ընկերությունը փնտրում է առնտրային գործակալներ վաճառքի, ծրագրակազմի ներդրման և հաճախորդների ոլորտում:**

Ավստրիական ՏՏ ընկերությունը, որը հիմնադրվել է 2005 թվականին Վերին Ավստրիայում, փնտրում է գործընկեր երկարատև համագործակցության համար առևտրային գործակալության համաձայնագրի ներքո, ով պատրաստ է վաճառել, իրականացնել և տրամադրել առաջին կարգի աջակցություն իր ծրագրակազմի համար: Այս ՏՏ գործիքը ավտոմատացնում և թվայնացնում է պահպանման և որակի գործընթացները ապակենտրոնացված կազմակերպություններում՝ անկախ արդյունաբերական հատվածից: Որպես ամպային հարթակ՝ ծրագրակազմը հեշտ է տեղադրման և օգտագործման համար:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d1b57d60-79ca-42ea-a37d-9e2cd5adaf03

Ծածկագիր. BOAT20201120001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Ֆրանսիական ընկերությունը գործընկերներ է փնտրում ծառայությունների համաձայնագրի ներքո մուլտիմեդիա սարքավորումների տեղադրման և / կամ սպասարկման համար**

Ֆրանսիական ընկերությունը գործընկերներ է փնտրում Եվրոպայում մուլտիմեդիա սարքավորումներ տեղադրելու կամ դրանց սպասարկման համար, ինչպիսիք են թվային ազդանշանները, կրպակները, վիդեոկոնֆերասը, տեսապատկերումը, աուդիոն, մալուխը: Ծառայությունների մատուցման համաձայնագիր է առաջարկվում հատկապես Եվրոպական երկրների ընկերություններին:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c5e5f4b9-f2a3-4d9e-9a32-7065972e4e43

Ծածկագիր. BRFR20190923001

# Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Մազերի խնամքի միջոցներ արտադրող ընկերությունը Իտալիայից փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրական համաձայնագրեր**

Դինամիկ և արագ աճող ընկերությունը Իտալիայից, որի հիմնական նպատակն է մատակարարել բարձրորակ ապրանքներ և ծառայություններ գեղեցկության սրահներին, փնտրում է օտարերկրյա դիստրիբյուտորներ: Ընկերությունը առաջատար դիրք է զբաղեցնում իտալական շուկայում և արդեն գործում է ավելի քան 50 երկրներում իր ապրանքանիշի ներքո: Այն հասանելի է նաև մասնավոր պիտակով արտադրական համաձայնագրերի համար:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b966b6b2-b98b-4e95-8d65-07d8a3ac87fc

Ծածկագիր. BOIT20210129001



**Մարզական արդյունքին նպաստող մաշկի խնամքի միջոցներ արտադրողը Միացյալ Թագավորությունից, փնտրում է դիստրիբյուտորներ անձնական խնամքի կամ առողջության և ֆիթնեսի ոլորտներում:**

Ընկերությունն արտադրում է մաշկի խնամքի պրեմիում ապրանքատեսակներ, որոնք հատուկ մշակվել, փորձարկվել են և դրանց արդյունավետությունն ապացուցված է մարզական արդյունքի նպաստմանը: Ընկերությունն իր արտադրանքը սկսեց 2019 թվականին Միացյալ Թագավորությունում․ ընկերությունը փնտրում է փորձառու դիստրիբյուտոր գործընկերներ՝ իր միջազգային աճի ռազմավարության շրջանակներում: Դիստրիբյուտորները պետք է փորձ ունենան անձնական խնամքի և (կամ) առողջության և ֆիթնեսի ոլորտներում: Տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո դիստրիբյուտորներն իրենց հաճախորդներին կառաջարկեն նոր և նորարարական ապրանքներ:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/06cf6703-3de4-49b3-b67e-835482e6b034

Ծածկագիր. BOUK20201111001

**Եթերայուղերի և տարբեր բնական կոսմետիկ արտադրանքների բուլղարական արտադրողը փնտրում է տարածման ծառայություններ և առևտրային գործակալության համաձայնագրեր**

Եթերայուղերի և բնական կոսմետիկ արտադրանքի բուլղարական արտադրողն իր սեփական ապրանքանիշի ներքո փնտրում է իր արտադրանքների համար դիստրիբյուտորներ ԵՄ և ոչ ԵՄ շուկաներում: Ընկերությունն աճեցնում է նարդոսի, օշինդի, երիցուկի, նարնջի, սպիտակ սոճու և գիհի, համեմի, սամիթի և սուսամբարի սեփական տնկարկները Սև ծովի ափին գտնվող Պոմորիե բերրի շրջանում: Ընկերությունը գործընկերներ է փնտրում առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո :

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/dc4096ac-e0bd-4c21-8cf2-ac792afbbeef

Ծածկագիր. BOBG20210118002

## Առողջապահություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

**Հիվանդների համար նախատեսված գանգի հատուկ իմպլանտների գերմանական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**



Գերմանական ընկերությունը մասնագիտացված է գանգի հատուկ իմպլանտների արտադրության մեջ: Այն օգտագործում է թվային և ֆիզիկական 3D մոդելներ նյարդավիրաբուժության, բերանի և դիմածնոտային վիրաբուժության, ինչպես նաև պլաստիկ վիրաբուժության ճշգրիտ արդյունքների համար: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների

| | |
|---|---|
| համաձայնագրեր: Ընկերությունն արդեն գործում է Կոլումբիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում:<br><br>https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1128a204-5d79-49af-afe2-d57cd9c75240<br><br>Ծածկագիր. BODE20210105003 | |
| **Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն ունի բազմառեժիմ ուլտրաձայնային օրթոպեդիկ վիրաբուժական համակարգ, որը կրկնակի վիրահատության ընթացքում PMMA ցեմենտը հեռացնելու գործիք է, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ**<br><br>Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է վիրաբույժների օրթոպեդիկ կրկնակի վիրահատության համակարգ՝ օգտագործելով ուլտրաձայնային հետազոտությունը, համատեղ վերանայումների ժամանակ PMMA (պոլիմեթիլմետակրիլատ, որը հայտնի է նաև որպես ոսկրային ցեմենտ) ցեմենտը հանելու համար: Համակարգը բաղկացած է երկու ցեմենտի և մեկ եզակի փափուկ հյուսվածքների ակոսներից: Ընկերությունն ունի լուրջ փորձառություն վիրաբուժական ուլտրաձայնային հետազոտություններում, որը նախկինում լապարոսկոպիկ վիրաբույժներին ներկայացրել է նորարարական համակարգ: Ընկերությունը փնտրում է համագործակցության համաձայնագրեր դիստրիբյուտորների և առևտրային գործակալների հետ:<br><br>https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7a120239-919f-473d-8157-9eeebe7fd42c<br><br>Ծածկագիր. BOUK20210119001 | |
| **COVID-19.Թվային առողջապահական լուծումների մշակողն ու արտադրողը Միացյալ Թագավորությունից, որը մասնագիտացված է առողջապահական ծրագրերի և կլինիկական վեբ-պորտալների միջոցով հիվանդների հեռակա մոնիտորինգի և կառավարման մեջ, փնտրում է գործակալներ և/կամ դիաստրիբյուտորներ**<br><br>Թվային առողջապահական լուծումների մշակողն ու արտադրողը Միացյալ Թագավորությունից, որը մասնագիտացված է առողջապահական ծրագրերի և կլինիկական վեբ-պորտալների միջոցով հիվանդների հեռակա մոնիտորինգի և կառավարման մեջ, մշակել է COVID ախտանիշների երկարատև գնահատման և մոնիտորինգի համար նախատեսված գործիք՝ կլինիկաների և հիվանդների համար: Ընկերությունը փնտրում է առողջապահական կազմակերպություններ կամ ընկերություններ, որոնք ամբողջ աշխարհում կապ ունեն տեղական կառավարման մարմինների հետ, որոնք կարող են ընկերությանը օգնություն և տեղական նոու-հաու տրամադրել, որպեսզի հնարավորություն ունենան շուկա մուտք գործել առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:<br><br>https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cfb252e0-1c21-4aa6-8a0d-cb8589ffbce9 | |

Ծածկագիր. BOUK20210115001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Բժշկական տեխնոլոգիաների ոլորտի գերմանական ընկերությունը տարածման ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո փնտրում է բարձր նորարարական բժշկական տեխնոլոգիական սարքավորումներ**

Բժշկական սարքերի դիստրիբյուտոր հանդիացող գերմանական ընկերությունը փնտրում է նոր բժշկական տեխնոլոգիաների արտադրանք in-vitro ախտորոշման, կետային խնամքի ախտորոշման և հարակից ոլորտում, որոնք տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո կտարածեն Գերմանիայում: Նրանց հաճախորդները գերմանական հիվանդանոցներն ու կլինիկաներ են:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ed135106-2ec2-4cf0-b5d9-7310a80a7f3a

Ծածկագիր. BRDE20190227002

# Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Ցելյուլոզայից սեղանի անձեռոցիկների իտալական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Իտալական ընկերությունը, որը միջին բարձրորակ սեղանի անձեռոցիկների արտադրության ոլորտում մեծ փորձ ունի, ուրույն տեղ է զբաղեցրել ներքին շուկայում, բայց այժմ ցանկանում է ընդլայնել շուկան և փնտրում է դիստրիբյուտորներ այլ երկրներում: Թղթե սեղանի անձեռոցիկների արտադրության գործարանը գտնվում է Կամպանիայում, իսկ Նեապոլում կա նաև վաճառքի խանութ:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/847d2941-1de0-4baa-bb1a-9aa3b0b34d59

Ծածկագիր. BOIT20191219001

**Իտալական ընկերությունը, որը մասնագիտացված է չիպերի հեռացման մեքենայացման համար հատուկ ընտրովի գործիքների նախագծման և արտադրության մեջ, փնտրում է դիստրիբյուտորներ և (կամ) վերջնական օգտատերեր:**

Մեխանիկական արդյունաբերության մեջ գործող իտալական ընկերությունը, որը նախագծում և արտադրում է չիպերի հեռացման մեքենայացման հատուկ գործիքներ, կցանկանա մշտական համագործակցություն հաստատել տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո արտասահմանյան գործընկերների հետ, ինչպես նաև վերջնական օգտատերերի հետ: Գործիքները խիստ ընտրովի են և թույլ են տալիս հետևողականորեն կրճատել արտադրության ծախսերը և ժամկետները: Ընկերությունը տրամադրում է հարմարեցված գործիքներ մի շարք ոլորտներում, ինչպիսիք են ավտոմոբիլային, ավիացիոնը, երկաթուղայինը, էլեկտրամեխանիկականը, էներգետիկը, նավթի ու գազի ոլորտները:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ba2d3965-59b4-4db5-b420-5510c4a55e30

Ծածկագիր. BOIT20210120004

**Գերմանական լրատվամիջոցների, տեսաֆիլմերի և կինոնկարների արտադրությամբ զբաղվող ընկերությունը փնտրում է գործընկերներ առևտրային համաձայնագրի ներքո**

Գերմանական լրատվամիջոցների, տեսաֆիլմերի և կինոնկարների արտադրության ոլորտի ընկերություն, որը կենտրոնացած է ընկերությունների, տոնավաճառների, ապրանքների, խթանման և 3-D կոմերցիոն ֆիլմերի ոլորտում, փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր: Ընկերությունն առաջարկում է տարբեր ծառայություններ կենդանի երաժշտության ձայնագրման, հեռուստահաղորդումների և կինոյի բնագավառներում: Ավելին, ընկերությունն ունի իր ձայնագրման ստուդիան: Բոլոր ծառայությունները համակարգվում են հաճախորդի հետ, որի հիման վրա էլ մշակվում է անհատական սպասարկման ծրագիր:
https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0f2b5af5-ba84-4666-bd9f-5db6dd5e6d24

Ծածկագիր. BODE20200526001

**Լեհական ոսկերչական զարդեր արտադրողը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի կամ արտադրական համաձայնագրի շրջանակներում համագործակցելու համար**

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է  բնական նյութերից, ինչպիսիք է ստրազը, բարձրորակ ապակին, ժամանակակից ձեռագործ զարդեր պատրաստելու ոլորտում, փնտրում է տարածման կամ արտադրական համաձայնագրեր:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/16766c46-ce74-49cc-8dba-6d12656c4ca8

Ծածկագիր. BOPL20210121001

**Հիդրավլիկ և օդաճնշական բաղադրիչների ռումինական դիստրիբյուտորը շահագրգռված է միջազգային համագործակցությամբ՝ տարածման ծառայությունների ներքո**

Ռումինական ընկերությունը հանդիսանում է հիդրավլիկ և օդաճնշական կայանքների և համակարգերի մեծ տեսականու դիստրիբյուտոր: Այն փնտրում է նոր շուկաներ՝ իրենց ապրանքատեսականին ներկայացնելու համար․ համագործակցությունը կլինի տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4868feb2-f8ce-48f4-a1c5-cefaf4cf3658

Ծածկագիր. BORO20201221001

**Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացված է գեոտեխնիկական հետազոտությունների, տեղագրության, կառուցվածքային նախագծման և քաղաքացիական և արդյունաբերական շինարարության տեխնիկական օժանդակության ոլորտում, շահագրգռված է միջազգային համագործակցությամբ՝ տարածման ծառայությունների կամ ենթապայմանագրի շրջանակներում:**

Ռումինական ՓՄՁ-ն առաջարկում է մասնագիտացված տեխնիկական ծառայություններ շինարարության ոլորտում ՝սկսած երկրատեխնիկական և տեղագրական հետազոտություններից մինչև կառուցվածքային նախագծերը: Ընկերությունը ցանկանում է ընդլայնվել արտաքին շուկաներում և, որպես այդպիսին, եվրոպական գործընկերների հետ կնքել տարածման ծառայությունների և (կամ) ենթապայմանագրային համաձայնագրեր:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/03455f8a-212f-4f07-8277-d4219bac5798

Ծածկագիր. BORO20201214002

**Հայտնի մակեդոնական ընկերությունը փնտրում է նոր հաճախորդներ իր նախագծման և տպագրական ծառայությունների համար՝ հիմնվելով տարածման ծառայությունների համաձայնագրի վրա**

Մակեդոնական տպարանը, որն առաջարկում է տպագրական ծառայությունների ամբողջական փաթեթ՝ կարճ ժամանակում արվող և առաջարկում է առաքում, փնտրում է նոր հաճախորդներ ամբողջ աշխարհում՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո առաջարկելու իր նախագծման և տպագրական ծառայությունների լայն տեսականին: Առաջարկվող ապրանքներն ու ծառայությունները ներառում են տպագրական նյութերի ձևավորում և պատրաստում, տպագրություն, պատրաստի գիրք և փոխադրում (կախված նպատակակետից):

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d7cdf029-f25a-4869-ae9a-f0fb2b522a61

Ծածկագիր. BOMK20201221002

**Շվեդական ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածելու համար իրենց բարձրացնող սարքավորումները**

Շվեդական ընկերությունը փնտրում է երկարաժամկետ գործընկերներ (դիստրիբյուտորներ կամ գործակալներ) իրենց բարձրացնող արտադրանքները վաճառելու համար, հատկապես սեփական նախագծված ամբարձիչների և ճառագայթային ձեռնասայլակների համար: Ընկերությունն առաջարկում

է ցանկացած տեսակի բեռնամբարձիչներ և ամբարձիչ սարքավորումներ, ինչպես նաև ստեղծում է լուծումներ, որոնք բարձրացնում են 250-10 000 կգ ծանրություն: Ընկերությունն առաջարկում է ամենաբարձր որակը ողջ գործընթացի ընթացքում և ապահովում է որակը և գործառույթը. արտադրանքը երրորդ կողմից փորձարկվում է EN ստանդարտներին համապատասխան:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/cce1c864-7bd2-453d-924c-50ae9556de9e

Ծածկագիր. BOSE20200109001

**Պլաստիկ փաթեթավորում արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ**

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձր և ցածր խտության պոլիէթիլենային փաթեթների արտադրության ոլորտում, ինչպիսիք են պայուսակները, պարկերը և պոլիէթիլենային ժապավենները, գործակալներ և դիստրիբյուտորներ է փնտրում այլ երկրներում իրենց վաճառքն ընդլայնելու համար:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/474633e3-4743-423b-8baf-b2e7a763b2fc

Ծածկագիր. BOBG20210118001




## Գործարար համագործակցության հարցումներ

**Ֆրանսիական ՓՄՁ-ն մատակարարման համաձայնագրի ներքո փնտրում է պոլիպրոպիլենային հյուսված պայուսակների մատակարարներ**

Գյուղատնտեսական և արդյունաբերական հատվածների համար նախատեսված փաթեթավորման լուծումների ոլորտում 40 տարվա փորձ ունեցող դիստրիբյուտորը փնտրում է փաթեթավորման արտադրողներ Եվրոպայում՝ մատակարարելու համար պոլիէթիլենային գործված տոպրակներ՝ մատակարարման համաձայնագրի ներքո: Ապրանքներն ունեն պատվերի և չափսերի լայն տեսականի:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b9f6fa6a-3bfd-4cd9-8dd2-11e0da5adaa2

Ծածկագիր. BRFR20210121001

**Ֆրանսիական ՓՄՁ-ն մատակարարման համաձայնագրի ներքո փնտրում է պոլիէթիլենային ինֆուզիոն տոպրակների մատակարարներ**

Գյուղատնտեսական և արդյունաբերական հատվածների փաթեթավորման լուծումների ֆրանսիական դիստրիբյուտորը 40 տարվա փորձով, փնտրում է փաթեթավորման արտադրող Եվրոպայում մատակարարման համաձայնագրի ներքո՝ բարձր խտության պոլիէթիլենային ինֆուզիոն տոպրակներ մատակարարելու համար:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/367f3071-5c98-4094-9c62-e18e548f95a6

Ծածկագիր. BRFR20210128001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

**Հոլանդական ՓՄՁ-ն առաջարկում է իր մեծ փորձը ճառագայթման պաշտպանական ոլորտում, նաև մասնագիտացված է կապարի և կապարի համաձուլվածքներից պատրաստված ճշգրիտ բաղադրիչների ձուլման և մշակման մեջ:**

Հոլանդական ՓՄՁ-ն մասնագիտացված է կապարի ձուլման և կապարի մշակման մեջ: Կապարը հաճախ օգտագործվում է որպես նյութ այնպիսի մեքենաներում, որտեղ ռենտգենյան ճառագայթներից, էլեկտրոնային ճառագայթերից և միջուկային ճառագայթերից պետք է պաշտպանված լինեն այնպիսի իրերը, ինչպիսիք են բժշկական և վերլուծական սարքավորումները: ՓՄՁ-ին յուրահատուկ է դարձնում ճառագայթային փորձաքննության, ձուլման և կապարի ճշգրիտ մշակման համադրությունը: ՓՄՁ-ն շահագրգռված է արտադրողի և համակարգի ինտեգրատորների հետ արտադրական համաձայնագրի

ներքո համագործակցությամբ, որոնք կապարի ճշգրիտ մասերի և հարակից ճառագայթային փորձաքննության գիտելիքների կարիք ունեն:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/dae3b376-34df-4986-afbe-03472e6d608f

Ծածկագիր. TONL20201211001

**Մոնիտորինգի համակարգ՝ խելացի մեքենայական տեսլականի հայտնաբերմամբ և թափոնների տեսակավորման գործընթացի աշխատանքային հոսքի վերլուծության համար ինտերակտիվ հարթակ**

Պրիմորսկա շրջանի սլովենական R&D ընկերությունը, որը մասնագիտացած է բնապահպանական արդյունաբերության գործընթացների վերլուծության ոլորտում, մշակել է մի նոր մոնիտորինգի համակարգ՝ բազմաթիվ հայտնաբերման սարքերով (AI/ML մեքենայական տեսլականով), որը տվյալների շտեմարան է մատակարարում գործընթացային տեղեկատվությամբ, ինչպիսիք են թափոնների կազմը, խոնավությունը և աղտոտիչների առկայությունը: Լուծումն ուղեկցվում է գերժամանակակից արդյունաբերություն 4.0 տեղեկատվական համակարգով: Ընկերությունը փնտրում է ռազմավարական գործընկեր՝ տեխնիկական օժանդակությամբ առևտրային համաձայնագիր կնքելու նպատակով:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6363bf84-f9d7-4376-be82-0afe5cf91d35

Ծածկագիր. TOSI20201214001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

**Մշտական հակածխային և հակաքրտնքային մշակում է որոնվում թափանցիկ դեմքի դիմակների համար**

Դեմքի թափանցիկ դիմակներ արտադրող բրիտանական ընկերությունը փնտրում է ջերմապլաստիկ էլաստոմերային թափանցիկ նյութի մշտական հիդրոֆիլային մշակում: Դրանք պահանջում են գործառույթ (իդեալականորեն՝ հավելանյութերի, ֆունկցիոնալացման կամ ծածկույթի միջոցով), այնպես որ նյութը մնում է հակածխային՝ դրա վրա արտաշնչելուց կամ ջերմաստիճանի փոփոխության ժամանակ: Ընկերությունը փնտրում է հնարավոր առևտրային համաձայնագրեր՝ տեխնիկական օժանդակության, լիցենզային կամ արտադրական համաձայնագրերով:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/acdc4bf8-f444-4282-8bdb-15e9580803e1

Ծածկագիր. TRUK20210127001

**Ֆրանսիական ընկերությունը փնտրում է եվրոպական արտադրող՝ հաբային տարբերակով անասնաբուժական դեղեր արտադրելու համար**

Ֆրանսիական դեղագործական ընկերությունը մասնագիտացված է անասնաբուժական դեղամիջոցների ոլորտում: Իր անասնաբուժական դեղերից մեկի համար ընկերությունը հաբեր արտադրելու համար փնտրում է արտադրող՝ Պայմանագրային արտադրող կազմակերպություն (CMO): Որոնվող գործընկերը պետք է ունենա անասնաբուժական որակավորում և կարողանա արտադրել GMP (լավ արտադրական պրակտիկա) բաժնում՝ ամուր ֆորմաներ: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագիր:

https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/54e9865b-c1a4-4910-9a81-3bdb8f1be579

Ծածկագիր. TRFR20210122001

# Նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

**Կայացան առցանց B2B հանդիպումներ ռուսական (Կալմիկիայի Հանրապետություն) ընկերությունների հետ**

«Ձեռնարկությունների եվրոպական ցանց» ծրագրի շրջանակներում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը «Ռուսաստանի նորարարական-տեխնոլոգիական կենտրոնների միության» (RUITC) հետ համատեղ, փետրվարի 15-18-ը առցանց հարթակում կազմակերպել էին գործարար համագործակցության հաստատման հանդիպումներ՝ հայկական և ռուսական ընկերությունների միջև:

Ռուսական ընկերությունները ներկայացնում էին անասնաբուծության, թարմ և սառեցված մսի, հացահատիկի, ալյուրի, կոմբինացված կերերի, հագուստի և տուրիզմի ոլորտները:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին հետագա համագործակցության շուրջ: Գործարար հանդիպումները հայկական և ռուսական ընկերություններին լայն հնարավորություն ընձեռեցին հաստատել նոր համագործակցություններ տարբեր ուղղություններով:



Ստորև ներկայացվում են 2021 թ.-ի մարտ, ապրիլ ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Մարտ

| | |
|---|---|
| 24/02/2021 | BIOKET 2021 Brokerage event - Lille - 15-19 March 2021 - Digital Edition<br>Լիլ (Ֆրանսիա)<br><br>Կենսազանգվածի նկատմամբ կիրառվող գործընթացներին և տեխնոլոգիաներին նվիրված գլոբալ համաժողովը տեղի կունենա առցանց տարբերակով՝ վեբինարներ և B2B հանդիպումներ՝ կապված կորոնավիրուսի համաճարակի հետ:<br><br>https://bioket-2021.b2match.io/ |

Ապրիլ

| | |
|---|---|
| 12/04/2021 | BIOKET 2021 Brokerage event - Lille - 15-19 March 2021 - Digital Edition<br>Հաննովեր (Գերմանիա)<br><br>Համագործակցության հաստատման այս միջոցառումը ՓՄՁ-ներին և հետազոտական կազմակերպություններին հնարավորություն է տալիս գտնել և հանդիպել գործընկերներ՝ առևտրային համաձայնագրերի և հետազոտական ու տեխնոլոգիական համագործակցության համար: Միջոցառումը վիրտուալ վայր է նոր տեխնոլոգիաներ, հասկացություններ և լուծումներ ձեռք բերելու, ինչպես նաև պոտենցիալ մատակարարների և բիզնես գործընկերների հետ կապ հաստատելու համար:<br><br>http://www.technologycooperationdays.com/ |

ԱՎԱԳ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ _ SENIOR EXPERTEN SERVICE (SES)

SES ծրագրի առավելությունները

➢ Մասնագետների վերապատրաստում, ուսուցում, որակավորում

➢ Ծառայությունների մատուցման, արտադրական գործընացի բարելավում, օպտիմալացում

➢ Տեխնիկական, արտադրական, կազմակերպչական խնդիրների լուծում

➢ Երկար տարիների փորձ ունեցող մասնագետների միջնորդում

➢ Խորհրդատվություն տնտեսության ավելի քան 50 ճյուղերի համար

➢ Ուղարկված հարցմանը համապատասխան աջակցություն, խորհրդատվություն

Ովքե՞ր կարող են օգտվել SES ծրագրից

➢ Փոքր ու միջին ձեռնարկությունները տնտեսության ամենատարբեր ոլորտներից

➢ Հանրային և բժշկական հիմնարկները

➢ Կրթական ձեռնարկությունները

➢ Հիմնադրամները

SES ծրագրի ֆինանսավորումը

Պատվիրատուն պարտավորվում է ստանձնել Հայաստանում նախատեսվող ծախսերը՝ կացարան, օրական 3 անգամ սնունդ, օրական 5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ որպես գրպանի փող:

Գերմանական կողմն իր վրա է վերցնում ինքնաթիռի տոմսի և ապահովագրության ծախսերը:

Հետաքրքրե՞ց Ձեզ: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հայաստանում Ավագ փորձագետների ծառայության ներկայացուցիչ Մարիամ Մաժինյանին:

Հեռ.՝ +374 95 12 84 87

E mariam.mazhinyan@armenien.ahk.de

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: ***Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:***

*Հարգելի գործարար,*

*Գրանցվեք հետևյալ հղմամբ՝*
**[http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799](http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799)** *և ստացեք անվճար հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:*

***Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:***

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը։ Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում։